ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.06.2020
345-53

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
նախագահ Հայկուհի Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Հարությունյան,

Ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 5.06.2020 թ.-ին 345-49 հարցմանը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պատասխան գրությամբ 2020 թ.-ի հունիսի 8-ին տեղեկացրել է, որ հայտարարագրված անձանց ցանկը հնարավոր կլինի ամփոփել միայն հունիսի 10-ին:

Հունիսի 12-ին Հանձնաժողովը տարածել է պաշտոնական հաղորդագրություն (http://cpcarmenia.am/hy/news/item/2020/06/12/urgent1/), որտեղ նշված է, որ «2020 թվականի հունիսի 10-ից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հրապարակվել են պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերը, որոնք հասանելի են հետևյալ հղմամբ՝ http://cpcarmenia.am/hy/declarations-registry/»:

Միաժամանակ հաղորդագրության մեջ նշված է, որ բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների հայտարարագրերը հրապարակված չեն կամ հանձնված են հունիսի 1-ից հետո, խնդրվում է մինչ այդ տեղեկությունների, տվյալի հիման վրա եզրահանգում կատարելը կամ լրագրողական նյութ պատրաստելը կապ հաստատել Հանձնաժողովի հետ և ստանալ պարզաբանումներ:

Հաղորդագրության մեջ հստակեցվում է, որ այս պահին Հանձնաժողովն իրականացնում է ներկայացրած հայտարարագրերի ամբողջականության և տեխնիկական պահանջների համապատասխանելիության, ինչպես նաև հայտարարագիր չներկայացրած անձանց տվյալների, հայտարարագիր չներկայացնելու պատճառների ստուգում:

Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տեղեկացնել.

1. Ամփոփված նախնական տվյալների համաձայն՝ քանի՞ անձ չի ներկայացրել հայտարարագիր:
2. COVID-19-ի հետևանքով ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ հայտարարագիր չներկայացրած անձանցից քանիսի՞ դեպքում ուշացումները չեն համարվել օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան